ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Զ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության փորձագետ Նարինե Սիրականյանի կողմից **2022թ. օգոստոսի 24-ից մինչև նոյեմբերի 23-ն** ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հանդիսանալով ՀՀ կրթության տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության փորձագետ՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի Ա.Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջում իրականացված ստուգման շրջանակում «Գործիքային կատարողական արվեստ» մասնագիտության կրթական գործընթացի որակի գնահատման արդյունքների ամփոփ վերլուծություն (18 էջ).
- Մասնակցություն վերահսկողության ոլորտում տնտեսվարող սուբյեկտների վիճակագրական տվյալների հավաքման և ճշգրտման աշխատանքներին.
- Մասնակցություն հանրակրթական ուսումնական հաստատությունների (դպրոցներ) ռիսկերի վերագնահատման աշխատանքներին՝ առաջին բաղադրիչի հաշվարկների իրականացման մասով (ՀՀ Լոռու, Սյունիքի, Արմավիրի, Տավուշի, Արարատի, Կոտայքի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի մարզեր և ՀՀ ԿԳՄՄՆ ենթակայության դպրոցներ).
- Մասնակցություն նախադպրոցական ուսումնական հաստատությունների ռիսկերի վերագնահատման աշխատանքներին՝ առաջին բաղադրիչի հաշվարկների իրականացման մասով (ՀՀ Արմավիրի, Արարատի, Վայոց Ձորի Կոտայքի, Տավուշի մարզեր).

- Դասալսումների արդյունքում՝ եզրակացությունների հիման վրա, առկա խնդիրների վերհանում, դասալսող մասնագետներին խորհրդատվության ապահովում.
- ՀՈՒՀ ստուգաթերթերի վերանայման աշխատանքներ.
- Ուսումնական հաստատություններում լիցենզավորման պարտադիր պահանջների և պայմանների ուսումնասիրության նպատակով մշակված ստուգաթերթերի վերանայման աշխատանքներ.
- ԱՈՒԿ ծրագրի շրջանակում 4-րդ դասարանների սովորողների ընկալելու հմտությունների գնահատման նպատակով դպրոցներում գրավոր հարցումների իրականացում՝ նախապես մշակված հարցաթերթերի միջոցով (Երևանի Ալ. Շիրվանզադեի անվան հ.21 և Ա. Խանջյանի անվան հ.53 դպրոցներ, 4 դասարան).
- Տվյալների բազայի համալրման աշխատանքներ՝ ըստ ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2022 թվականի տարեկան ծրագրում ներառված «Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» ծրագրի շրջանակում դպրոցներում իրականացված դասալսումների արդյունքում դասալսող մասնագետների կազմած եզրակացությունների (5 դպրոց, 27 ուսուցիչ).
- Ըստ դասալսումների արդյունքում կազմված եզրակացության ձևաթղթի պահանջների՝ ստուգման ընթացքում սովորողներին տրված գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում ուսուցիչների դասավանդած VI, IX, XI դասարաններում «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից (ուսուցիչների դասավանդած բոլոր դասարաններում ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից անբավարար (0-3) գնահատված սովորողների միջին տոկոսային թվի հաշվարկային գնահատականներ, ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից և նույն սովորողների՝ տվյալ առարկայի նախորդ տարվա տարեկան «Անբավարար» գնահատականների տարբերության հաշվարկային միավորներ).
- Ուսուցիչների գնահատման արդյունքների ամփոփում՝ ըստ դասալսման գործիքակազմի (23 ուսուցիչ).
- Երևանի Ալ. Շիրվանզադեի անվան հ. 21 հիմնական դպրոցում իրականացված դասալսումների արդյունքների վերլուծություն՝ ըստ դասալսողներիի կողմից

ներկայացված եզրակացության, մասնավորապես՝ ամփոփվել են դասալսումների արդյունքները՝ ըստ դասալսման ձևաթղթի «Ուսումնական նպաստավոր միջավայր», «Դասավանդում», «Կարողունակությունների ձևավորում» բաժինների, ցույց են տրվել առանձին բնութագրիչների ազդեցությունը ուսուցիչների ընդհանուր գնահատականի ձևավորման վրա, համադրվել են սովորողների գրավոր աշխատանքների և նույն դասարաններում դասավանդող ուսուցիչների դասերի արդյունավետության գնահատման արդյունքները, արվել են առաջարկներ սովորողների առաջադիմության և դասավանդման արդյունավետության բարձրացման համար (22 էջ).

- Երևանի հ. 46 ավագ դպրոցում իրականացված դասալսումների արդյունքների վերլուծություն՝ ըստ դասալսողներիի կողմից ներկայացված եզրակացության, մասնավորապես՝ ամփոփվել են դասալսումների արդյունքները՝ ըստ դասալսման ձևաթղթի «Ուսումնական նպաստավոր միջավայր», «Դասավանդում», «Կարողունակությունների ձևավորում» բաժինների, ցույց են տրվել առանձին բնութագրիչների ազդեցությունը ուսուցիչների ընդհանուր գնահատականի ձևավորման վրա, համադրվել են սովորողների գրավոր աշխատանքների և նույն դասարաններում դասավանդող ուսուցիչների դասերի արդյունավետության գնահատման արդյունքները, արվել են առաջարկներ սովորողների առաջադիմության և դասավանդման արդյունավետության բարձրացման համար (21 էջ).
- Երևանի հ. 80 հիմնական դպրոցում իրականացված դասալսումների արդյունքների վերլուծություն՝ ըստ դասալսողներիի կողմից ներկայացված եզրակացության, մասնավորապես՝ ամփոփվել են դասալսումների արդյունքները՝ ըստ դասալսման ձևաթղթի «Ուսումնական նպաստավոր միջավայր», «Դասավանդում», «Կարողունակությունների ձևավորում» բաժինների, ցույց են տրվել առանձին բնութագրիչների ազդեցությունը ուսուցիչների ընդհանուր գնահատականի ձևավորման վրա, համադրվել են սովորողների գրավոր աշխատանքների և նույն դասարաններում դասավանդող ուսուցիչների դասերի արդյունավետության գնահատման արդյունքները, արվել են առաջարկներ սովորողների առաջադիմության և դասավանդման արդյունավետության բարձրացման համար (22 էջ).

- Երևանի հ.75 հիմնական դպրոցում իրականացված դասալսումների արդյունքների վերլուծություն՝ ըստ դասալսողներիի կողմից ներկայացված եզրակացության, մասնավորապես՝ ամփոփվել են դասալսումների արդյունքները՝ ըստ դասալսման ձևաթղթի «Ուսումնական նպաստավոր միջավայր», «Դասավանդում», «Կարողունակությունների ձևավորում» բաժինների, ցույց են տրվել առանձին բնութագրիչների ազդեցությունը ուսուցիչների ընդհանուր գնահատականի ձևավորման վրա, համադրվել են սովորողների գրավոր աշխատանքների և նույն դասարաններում դասավանդող ուսուցիչների դասերի արդյունավետության գնահատման արդյունքները, արվել են առաջարկներ սովորողների առաջադիմության և դասավանդման արդյունավետության բարձրացման համար (21 էջ).
- Վարչության պետի հանձնարարությամբ կատարել եմ այլ ընթացիկ աշխատանքներ:

ՌԳՍՊՎԳ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ՝
ՆԱՐԻՆԵ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

23 նոյեմբերի 2022թ.